ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- մարտի 2025 թվականի №---- -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի №294-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №294-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) համաձայնություն է տվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող Երևան քաղաքի Տերյան փողոցի 108 հասցեում գտնվող ՏԵ-38 ենթակայանը (այսուհետ՝ Ենթակայան) և դրանով զբաղեցված հողամասը «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առուվաճառքի գործարքով օտարելու գործարքի կնքմանը, պայմանով, որ Ընկերությունը դրա կնքումից հետո 30 ամսվա ընթացքում ձեռք կբերի նոր ենթակայանի համար նախատեսված գույքը (այսուհետ նաև՝ Գույք),

բ) Ընկերության 2021 թվականի մարտի 15-ի №Ե-45-21 գրության համաձայն՝ վերջինիս և «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2020 թվականի սեպտեմբերի 9-ին կնքվել է առուվաճառքի պայմանագիր, որով վերջինս սեփականության իրավունքով ձեռք է բերել Ենթակայանն ու դրանով զբաղեցված հողամասը, այնուհետև՝ 2020 թվականի դեկտեմբերի 11-ին «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է Ենթակայանն ու դրանով զբաղեցված հողամասը առուվաճառքի եղանակով օտարելու պայմանագիր, որով վերջինս ստանձնել է Ընկերության և «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2020 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված

առուվաճառքի պայմանագրով ամրագրած պարտավորությունը, այն է՝ դրա կնքման օրվանից 30 ամսվա ընթացքում, Որոշման 1-ին կետի 1-րդ ենթակետի հիման վրա Ընկերությանը հանձնել Գույքը,

գ) Ընկերությունը 2023 թվականի մարտի 9-ի №Ե-281-23, մարտի 23-ի Ե-350-23 և ապրիլի 19-ի №Ե-501-23 գրություններով դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ Ընկերությանն է դիմել «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և նշել, որ համապատասխան տարածքում կառուցապատում իրականացնելու իրավունքն իրեն նախատեսված ժամկետից ավելի ուշ տրամադրելու արդյունքում չի հասցրել ապահովել Գույքի կառուցումը, ուստի դիմել է Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի երկարաձգման համար, և Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 3-ի №143-Ա որոշմամբ Գույքի ձեռք բերման ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի մարտի 28-ը,

դ) Ընկերությունը 2025 թվականի մարտի 17-ի №1839-2025 գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ իրեն է դիմել «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և նշել, որ նախատեսում է դիմել համայնքապետարան Երևան քաղաքի Տերյան փողոցի 107 հասցեում կառուցապատում իրականացնելու թույլտվության ժամկետը, այդ աշխատանքների՝ վերջնական ավարտին հասցնելու հանգամանքով պայմանավորված, մինչև սույն տարվա ավարտը երկարաձգելու նպատակով ու քանի որ նոր ենթակայանի համար տրամադրման ենթակա գույքը գտնվում է կառուցվող շենքի ավտոկայանատեղիում, այդ շենքի ավարտական ակտի ձևակերպումից և պետական գրանցումից հետո միայն հնարավոր կլինի ապահովել Ընկերության և «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև Գույքի օտարման գործարքի կնքումը: Նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է նոր ենթակայանի համար նախատեսված գույքն Ընկերության կողմից ձեռք բերելու ժամկետը երկարաձգել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №294-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «մինչև 2025 թվականի մարտի 28-ը» բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
--- մարտի 2025 թ.